ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՍՄԲԱՏ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ Ս. ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի բարեպաշտ և հավատացյալ քույրեր և եղբայրներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սիրասուն զավակներ.

Շուրջ քառասուն օր առաջ Միածնաէջ Մայր Տաճարում ես իմ հոգևոր 5 եղբայրների հետ միասին ուխտեցի ծառայել Հայ Եկեղեցուն որպես հոգևորական և, համաձայն Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրության, ձեռամբ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի, արժանացա քահանայական օծման, և ահա այսօր իմ ուխտի անդրանիկ պատարագն եմ մատուցում ի փառս Աստուծո և ի վայելումն հավատացյալ ժողովրդի:

Սուրբ Խորանից հիշում եմ երախտաշատ, երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսին, որի հայրապետության տարիներին ընդունվեցի ճեմարան: Նրա լուսավոր հոգուն մաղթում եմ հավիտենական բնակություն երկնային կայաններում:

Որդիական սիրո և երախտագիտության խոսք եմ հղում առ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ արժանացրեց նվաստիս Հայ Եկեղեցու միաբանության անդամ լինելու: Ցանկանում եմ նրան գահակալության երկար տարիներ և մաղթում, որ Տերը հովվե մեր հովվապետին, որպեսզի նա էլ հովվե ազգը հայոց ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Ի խորոց սրտի երախտապարտ եմ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին, որ ինձ համար հոգևոր ծնող հանդիսացավ և ձեռնադրության հոգեպարար արարողությամբ ջնջեց իմ ապրած կյանքի բոլոր մեղավոր էջերը, վերածննդի կոչեց՝ հետայսու միայն հոգևոր ասպարեզի սերմնացան լինելու նպատակով:

Շնորհակալական խոսք եմ հղում Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին, որ ճեմարանի վերատեսուչ էր, և նրա հայրական բարեխնամ և գորովագութ ձեռքի տակ անցան ուսումնառությանս տարիները, ինչպես նաև Մայր Վանքի լուսարարապետ Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանին, որի հորդորներով սովորեցինք Հայ Եկեղեցու արարողությունները: Շնորհակալություն նաև գիտության ակնաղբյուր հանդիսացող հոգևոր ճեմարանի դասախոսական ողջ կազմին:

«Շանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո՝ զորութիւնդ՝ զքեզ փառաւորեմք իմանալի լոյս»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսպես է սկսվում օրհնության շարականը քերթողահայր Սուրբ Մովսես Խորենացու՝ նվիրված մեր հոգիների Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս Աստուծո

պայծառակերպության տոնին. «Որ լեռան վրա այլակերպվելով ցույց տվեցիր քո աստվածային զորությունը՝ քեզ ենք փառավորում իմացալի լույս»:

Հայ Եկեղեցին ամեն տարի մեծ շուքով տոնում է ամենամեծ՝ տաղավարաց տոներից երրորդը, որ կոչվում է «Այլակերպութիւն Տեառն մերոյ և փրկչի Յիսուսի Քրիստոսի»:

Այսօր լույսի տոն է:

Սարկավագը ընթերցեց Սուրբ Մատթեոս ավետարանչի Ավետարանի այն հատվածը, որտեղ պատմվում է այն մասին, թե ինչպես մեր Տերը Փիլիպյան Կեսարիայի կողմերը գնալով հարցրեց աշակերտներին, թե մարդիկ ինչ են ասում իր մասին. «Ո՞վ եմ ես»: Եվ աշակերտները պատասխանեցին նրան. «Մանք ասում են, թե Հովհաննես Մկրտիչը, ոմանք՝ Եղիա մարգարեն, իսկ ուրիշներն էլ՝ մարգարեներից որևէ մեկը»: Ապա դարձյալ հարցրեց. «Իսկ դուք ինչ եք ասում, ո՞վ եմ ես»: Պետրոսը պատասխանեց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծո որդին»: Եվ Հիսուս ասաց. «Երանի է քեզ, Սիմոն Հովհաննի որդի, որովհետև մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ իմ հայրը, որ երկնքում է»: Եվ խստիվ պատվիրեց աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թե ինքն է Քրիստոսը:

Վեց օր հետո Հիսուս Իր հետ վերցրեց երեք ամենասիրելի աշակերտներին՝ Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին, և միասին բարձրացան Նազարեթի ընդարձակ հովտի վրա իշխող Թաբոր լեռան հրաշագեղ բարձունքը, և նրանց առջև պայծառակերպվեց: Նրա դեմքը փայլեց, ինչպես արեգակը, և զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը: Տեսան աշակերտները Նրան կանգնած Հին Ուխտի երկու մեծ ռահվիրաների՝ Մովսես ու Եղիա մարգարեների հետ մտերիմ զրուցելու պահին: Պետրոսը հափշտակված տեսիլքով հիացմունքի մեջ հանդգնում է ընդհատել նրանց ասելով. «Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք: Եթե կամենաս, երեք տաղավարներ կպատրաստենք, մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Բայց հանկարծ լուսավոր մի ամպ ծածկում է նրանց և լույսի ցոլքերի միջից լսվում է խորհրդավոր մի ձայն, որ ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրան լսեցեք»: Առաքյալները սարսափած գետին են ընկնում: Մոտենում է Հիսուս և ասում. «Ոտքի ելեք և մի վախեցեք»: Առաքյալները խաղաղված վեր են նայում և տեսնում են միայն իրենց վարդապետին՝ խաղաղության և սրբության բարձունքի վրա: Անհավասիկ ամբողջ դեպքը, որի մեջ աստվածահայտնության մեծ երաշխիքը կա, քանզի լուսաշող ամպերի միջից եկող ձայնը Սուրբ Հոգու վկայությունը եղավ, ինչպես մկրտության պահին Հորդանան գետում, երբ Հովհաննես Մկրտիչը ջրով մկրտում էր Քրիստոսին, Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ նրա վրա: Երկնքից մի ձայն լսվեց, որ ասաց. «Դա է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը»:

Անշուշտ, ըստ ավանդության, բոլորս գիտենք, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում հայերը նավասարդ ամսվա ընթացքում Անահիտ դիցուհուն նվիրված տոն են ունեցել: Մեր Սուրբ հայրերը ըստ Գրիգոր Լուսավորչի

մտածման Վարդապետի տոնը պատշաճեցրել են մեր Տիրոջ այլակերպության տոնին:

Այժմ ահա պայծառալույս արեգակը գտնվում է երկնակամարի բարձրագույն դիրքերում և մեզ վրա սփռում է իր կենսատու ճառագայթները՝ մեզանից հեռացնելով ձմեռվա շունչը, երբ ամեն տեղ կանաչ է ու հասունացող բերք. հովիտները գեղեցկացել են երփներանգ ծաղիկներով և պարտեզները՝ բուրավետ վարդերով, տոնում ենք Վարդավառի տոնը: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ ինչպես վարդը փակված լինելով պատյանում ցույց չի տալիս իր գեղեցկությունը և չի բուրում իր անուշահոտությամբ, նույնպես նաև մեր Տերը միշտ լինելով աշակերտների հետ ցույց տվեց նրանց իր աստվածային ամբողջ զորությունը միայն այլակերպության պահին լուսապայծառ տեսքով:

Եվ արդ, ո՞րն է խորհուրդը այսօրվա լուսաշող տոնի: Սիրելի հավատացյալներ, Հիսուսի այլակերպությունը մեծագույն հավաստիքը եղավ իր աստվածային առաքելության, և առաքյալները խորապես համոզվեցին, թե սովորական մարդկանցից տարբեր խորհրդավոր զարմանահրաշ մի անձնավորություն է իրենց Ուսուցիչը, և հաստատուն համոզումը ունեցան, որ պատրանք չէ իրենց պաշտամունքի Վարդապետը:

Այլակերպության պահին առաքյալները ճաշակեցին իրենց ապրած կյանքի ամենաերանելի վիճակը և տարիներ շարունակ պահեցին այդ հուշը որպես անցյալից եկող զմայլելի մի պատկեր: Եվ տարիներ հետո Տիրոջ սիրելի կրտսերագույն աշակերտը պետք է վկայեր նրա փառքի մասին գրելով. «**Տեսանք փառքը Հոր միածնի, լի շնորհքով և ճշմարտությամբ**» (Հովհ. Ա 14): Երբ ամբողջ Թաբոր լեռը լուսավորված էր երկնային լույսով, Առաքյալները պայծառատեսություն ունեցան հասկանալու վարդապետի երկնային նկարագիրը, քանզի նրա լուսաշող դեմքից ճառագայթող լույսն առաջացել էր ոչ թե արևի ճառագայթներից, այլ իր ներքին էությունից, հոգեղեն մարդակից, որի ակնաղբյուրն ու արմատը Արարիչն Աստված է, որով և ցույց տվեց, թե ինքը Հոր մեջ է և Հայրն իր մեջ:

Կանգնած էր փառքի Տերը, ողողված լույսերի մեջ՝ իր կողքին ունենալով Մովսես մարգարեն, որն Իսրայելի առաջին Փրկիչն էր և օրենսդիրը հրեական կրոնի, որի դեմքը նույնպես լուսափայլում էր, երբ Սինա լեռից իջնում էր՝ իր հետ բերելով Տասնաբանյա պատվիրանները, և Եղիան, որ ոսկեմուտ հրեղեն կառքով երկինք բարձրացավ այլևս չվերադառնալով:

Լույսի և կրակի մարդիկ եկել էին վկայելու Նոր Լույսին, որ փողփողում էր Թաբոր լեռան գագաթին, որ ասել էր «**Ես եմ լույսն աշխարհի**» (Հովհ. Ը 12):

Եվ այդ Լույսը, ինչպես մեկնաբանում է Հովհաննես աստվածաբան ավետարանիչը, եկել և բնակություն էր հաստատել մարդկանց մեջ ու լուսավորում էր խավարի մեջ, և խավարը նրան չընդունեց:

Մենք տեսնում ենք միայն մարդկանց արտաքինը, և մեր աչքերը անհաղորդ են նրանց ներքին լույսին: Բայց կան պահեր, երբ մարդու դեմքը լուսավորվում է ներքին լույսով, և այդ պահին միայն կարող ենք տեսնել բուն մարդուն, նրա հոգին:

Ցուրաքանչյուր մարդ, որևէ վնաս գաղափարի նվիրված անհատ իր մեղքերից և տհաճ մտքերից թոթափվելու համար պետք է ունենա իր թաքուր լեռը, որի գրավականը աղոթքն է՝ հոգու մաքրությունը, Սուրբ Ավետարանի պատգամների պահպանումը, որպեսզի կարողանանք վստահ բարբառել. «Տէր ծագեա զանձինս մեր Լոյս քո իմանալի»:

Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս Աստուծո պայծառակերպության շողերի հետ միասին բոլորիս հոգիներում թող տիրվի շնորհք, սեր և խաղաղություն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն: